

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մայիսի 18-ին, շաբաթ օրը, ժամը 12-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ 1974—75 ուսումնական տարվա հոգևոր ճեմարանի շրջանավարտներ Հակոբ սրկ. Խաչատրյանի և Հակոբ սրկ. Գըլընճյանի ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը՝ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի նախագահության ներքո:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը և մայրավանքի աշխատանքային բաժնի վարիչները:

Հանդիսությունը բացվեց խմբովին երգված Տերունական աղոթքով:

Քննիչ հանձնաժողովը, որի կազմում էին հոգևոր ճեմարանի դասախոսներ Արթուն Հատիտյանը, Պարգև Շահբազյանն ու Սամվել Անթոնյանը, նախապես առանձին քննության առնելով ներկայացված ավարտաճառերը, տեսչության միջոցով միջնորդություն էին հարուցել Վեհափառ Հայրապետի մոտ՝ շրջանավարտներին հանդես գալու համար իրենց ավարտաճառերի բանավոր պաշտպանությամբ:

Ներկայացված դիպլոմային աշխատանքների մասին հանձնաժողովի զեկուցագրից հետո, խոսք տրվեց շրջանավարտ սարկավագներին: Նրանցից յուրաքանչյուրը բանավոր պաշտպանության ժամանակ ներկայացրեց իր նյութը և պատասխանեց հանձնաժողովի ու ներկաների հարցերին:

Ընդմիջումից հետո քննող հանձնաժողովը արձանագրեց հետևյալ գնահատականները՝ շրջանավարտ սարկավագների ավարտաճառերի համար.

Հակոբ սրկ. Խաչատրյան. ավարտաճառի թեման՝ «Հայերենի դերբայները և նրանց պատմական փոփոխությունները», 4 գլուխ, 55 մեքենագրված էջ. «Բավարար»:

Հակոբ սրկ. Գըլընճյան. ավարտաճառի թեման՝ «Եկեղեցական կանոններն ու պաշտամունքը», 5 գլուխ, 45 մեքենագրված էջ. «Գերազանց»:

Այնուհետև տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը նախ իր շնորհավորական խոսքն ուղղեց շրջանավարտներին, ապա, հանուն Վեհափառ Հայրապետի, հանձնեց դիպլոմները:

Դիպլոմների հանձնումից հետո տ. Հուսիկ եպիսկոպոսը, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանի հետ, շրջանավարտներին առաջնորդեց Վեհարան, ուր նրանք ներկայացան Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունն Իր գոհունակությունը հայտնեց Մայր Աթոռի երիտասարդ երկու սարկավագների այս հաջողության համար և հորդորեց նրանց վանական-միաբանական պարտականություններին զուգընթաց միշտ լինել նաև մտավոր աշխատանքի մարդ, երբեք չկըտրվել գիր ու գրականությունից, հոգեպես և իմացապես Է՛լ ավելի զարգանալ, չհանգըստանալ ձեռք բերած հաջողություններով:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը, Իր

գնահատանքը հայտնելով, մեկական ժամացույց նվիրեց շրջանավարտ սարկավագներին՝ թելադրելով, որ գնահատեն ժամանակի արժեքը և իրենց պարտականությունները կանոնավորեն ժամացույցի ճշգրտությամբ, ժամանակի ճշմարիտ ըմբռնումով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է հոգևոր ճեմարանի շրջանավարտներ Հակոբ սրկ. Խաչատրյանին և հակոբ սրկ. Գալշնճյանին ու մաղթում, որ նրանք լինեն Մայր Աթոռին և Վեհափառ Հայրապետին արժանի միաբաններ ու զավակներ: